ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅՎԱԾՆԵՐ 1917 ԹՎԱԿԱՆԻ ՕՐԱԳՐԻՑ

Հունվար 12, 1917

Մի փոքր գուշակություններ.

• Պատերազմը՝ գերմանների խաղաղության այս գորովոտ փափագով, երևի մի քանի ամսից հետո վերջ կունենա, ուրեմն 3 տարին լրացած: Ամենաքիչը բոլոր կողմից մի 6 միլիոն մարդ սպանված՝ չհաշված հայերը:

Հայերի կորուստը: Ոմանք ընդունում են 1 միլիոն, ոմանք 800.000, ոմանք 600.000: Եթե Հայաստանում կար 1.800.000 հայ, ուրեմն ի՞նչ է մնում հաշվենք. 300.000 Կովկաս ապաստանած. – 200.000 Պոլիս-Իզմիր: Մնում է 1.300.000 անհայտ ճակատագրով:

Որոշ բան չի կարելի ասել:

Այս մարդիկ սպանված են գրեթե 12-14 տարեկան պատանիներից սկսած մինչև ծերերը:

1.300.000 հայի կեսը այր սեռ է, ուրեմն 6-700.000 հոգի, ուրեմն եթե թուրքերը սպանել են ամենաքիչը 600.000 հոգի, կը նշանակե այլևս ո՛չ մի առնական սեռի հայ չի մնացել. սա չի թվում ինձ հավանական: Ավելացնել պետք է և բազմաթիվ կանանց ու աղջիկների սպանվելը և հարեմներ տանելը, իսլամացում և այլն:

Այսպես, ինձ թվում է, որ չափազանցություն կա, իսկ եթե չափազանցություն չկա, ուրեմն կորած ենք... հազիվ մնացած լինի այն ժամանակ մի 300.000 հայ ծեր, խենթ, տգեղ կանայք և հիվանդ երեխաներ: Սակայն չեմ կարծում. ինձ թվում է, որ մի միլիոն հայ դուրս կգա վերջ ի վերջո...

Գալով հայկական ինքնուրույնության՝ դա երազների երազ է ռուսների գրաված Հայաստանում, սակայն հույսի մի փոքր նշույլ կա Կիլիկիայում: Սրանից հետո ռուսն է մեր առաջին և մեծ թշնամին, թուրքը անցավ... Բարով նա էլ անցնի, և Մասիսը մնա այլևս հպարտ, ազատ, իր անվան համաձայն ազատ...

• Մենք պետք է հավիտենապես մեր տեղն ունենանք արևի տակ:

• Մենք պղնձե շեփորով պիտի հռչակենք, պիտի ներբողենք մեր կյանքը, մեր արևը:

• Մարդկության խիղճ... ծաղրական է...

• Թուրքերը գիտեն իրենց վայրագությունները շպարել, սնգուրել արյունարբու աչքերը՝ եվրոպացիին խաբելու համար, նրանք շատ վարպետ են խաբելու մեջ և եվրոպացիին էլ լավ են ճանաչում:

• Սարսափելին միայն այն չէ, որ թուրքը անդադրում կողոպտում է հայերիս և այդ ծով արյան մեջ նա իր մոնղոլական քեֆն է անում, այլ այն, որ «լուսավոր,

խղճմտանքով» Եվրոպան հանդիսատես է այդ քեֆին, և ծափահարող և շահ որոնող...

Եվրոպան ավելի գազան է, տմարդ unthier *(հրեշ)*, քան թուրքը: Որովհետև որին շատ է տրված, նրանից էլ շա՞տ է պահանջվում:

• Չմոռանանք մեր պատվիրանները, որ երևի մի հանճար Մասիսի բարձունքից որոտալու է հայերին. մի նոր տասը պատվիրան. Մասիսի ժայռերից կոփած տախտակների վրա.

ա) Թուրքն է եղել մեր ամենամեծ թշնամին և է.

բ) Մոնղոլները իսլամով ավելի գազանացած, եղել և կը մնան մեր դահիճները.

գ) Եվրոպան պոռնիկ է, ոճրագործ, վաճառող.

դ) Վրեժ թուրքին, քրդին.

ե) Հայաստանը մերն է և մերն է մնալու.

զ) Մենք պիտի աշխարհին մեր խոսքը ասենք.

է) Մենք Քրիստոսից ավելի մաքուր նահատակ ենք տիեզերքի Աստծու առաջ.

ը) Մենք ենք բերելու աշխարհին իսկական ազատության, եղբայրության, ռամկության արշալույսը.

թ) Մեր լեռների վրա պիտի հանգչի մեր տապանը նոր մարդկություն ստեղծելով՝ կործանված, արյան հեղեղի տակ մեռած Եվրոպայի.

ժ) Դուրս է գալու Միերը:

• Մենք մեր սերունդները կրթելու ենք վրեժով, միայն վրեժով. երբեք չպիտի հաշտություն ծագի հայի և թուրքի մեջ, կամ մենք պիտի նրանց ջնջենք և ստրկացնենք, կամ նրանք մեզ: Տեսնենք:

Հուլիս 2, 1917

• Թերևս մի վայրկյան ընդունենք, որ եվրոպական ժողովուրդները պատասխանատու չեն իրենց կառավարության սրիկայությունների և նյութված սարսափների, բայց այդ երբեք չի վերաբերում թուրք ժողովրդին. այստեղ ժողովուրդ և պետություն մեկ են, իրար լրացնող. թուրքը ի ծնե գազան է, և նա մեծ հաճույք է զգում երեխաներ մորթելով և կանանց արգանդները ճեղքելով, մարդկանց այրելով...

Կաշառված, ստոր Եվրոպան և նրա ծախված մամուլը և բազմաթիվ անաստված հրեաները միայն ընդունակ են հերքելու փաստերը և թուրքին գառներ դարձնելու:

• Թուրքերը, ռուսները, Գերմանիան, քրդերը և Եվրոպան հայերին այնպիսի անելք վիճակի մեջ են դրել, որից ազատվելու համար հայերը պիտի հնարեն չորրորդ տարածության չափը, ձևը, որով կարողանան հաղթել՝ տիեզերքում հնարավոր արգելքներից խուսափելու ու ազատագրվելու համար: Այնքան մեծ է հայության վիշտն ու տառապանքը, այնքան ահռելի է ու անօրինակ, որ մեծությունը չափելու համար տիեզերքի անհունությունն ու խորությունը պիտի առնել, իսկ ահռելիության սարսափների համար որակելու բառարաններում բառեր չկան. և ոչ մի բանաստեղծ չի կարող արտահայտել, և միայն պիտի զգալ այն հասկանալու համար, իսկ զգացողն էլ չի կարող այդ ապրել՝ կմեռնի այդ սարսափն զգալով:

Միլիոն ու կես ժողովուրդ մերկացնել իր հազարամյա հարստությունից, ավերել նրա հնությունները, որ նրա հոգու հատորներն են – իր վանքերը, ծեռագրերը, մորթել հարյուր-հազարավորներ՝ հայրեր, մայրեր, եղբայրներ, քույրեր, մանուկներ, ծերեր, հիվանդներ, կախել կույսեր և հղի կանանց, սարսափելի նուրբ և տմարդ տանջանքների ենթարկել, բռնաբարել սրբակույս երեխաներ, պատկառելի մայրեր... և մնացած մերկ, ծեծված, սարսափներ տեսած խելագար մի բազմության՝ բոբիկ, քաղցած, մտրակների, կացինների ու սվինների տակ քաշել այրվող, անջուր անապատները... Եվ ջանալ արդարանալ ազգերի առաջ, դատապարտել զոհերը, և դեռ հանձինս ռուսների և մյուսների բարեկամներ գտնել... այս բոլորը անհնար է հասկանալ, գանկ չի դիմանա այս անսահման օվկիանոսներով թույնը պարփակել. մարդ սոսկալի-կատաղի խելագարության է հասնում, դիվական ցասման. օռնալ պետք է, ոչ թե գրել, բոլոր գայլերի բերաններով մեկեն օռնալ, օռնալ...

Եվ թուրք, «ասպետ» թուրքը, մի՞թե պիտի հետո ծեռքերը լվացած, հանգիստ նստի մեր ավերակների, մոխիրների, մեր հարազատների փշրված, այրված ոսկորների վրա, և մեր աղջիկներով լցված հարեմներում քեյֆ անե. և պետություն ունենա. մեր լճերը բառացի լցվեցին մեր դիակներով, մեր ջրհորները մեր մանուկներով. մեր գետերը երկու տարի է դիակներ են թափում օվկիանոսները, մեր ժողովրդի բոլոր երակները բացված են և միայն արյուն է հոսում, - արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն...

Ո՞ւր են մեր աշխատող, պարկեշտ գյուղացիները, հովիվները, մեր իմաստուն ծերերը, և մեր գթառատ նանին, մամիկները, ո՞ւր են մեր համեստ հարսները, մեր մաքուր վարդ աղջիկները, մեր հրեշտակ մանուկները, ո՞ւր են մեր մտավորականները՝ գրող, բանաստեղծ, ուսուցիչ... յաթաղանի տակ, հրդեհված, ջրահեղձ...

Ներել, մոռանալ՝ երբեք, ո՛չ մի ծեռք հաշտության, ո՛չ մի թուրքի հետ, միայն վրեժ, դարերով վրեժ, սա պիտի լինի մեր աստվածը՝ վրեժ, մեր կրոնը՝ վրեժ, մեր պատմական միսիան՝ վրեժ, մեր երգը, մեր նկարը, մեր հացը՝ վրեժ, մեր որդին, մեր սերը, մենք՝ վրեժ:

Դարե՛ր, դարե՛ր, դարե՛ր, միայն վրեժ...

Պիտի մենք լիրբ լինենք, ստոր, պոռնկորդի, որ մոռանանք և ներենք:

28 փետրվար 1917

• Համաձայնության պետությունները պախարակում են Բեթ Հոլվեգին, որ նա «թղթե կտոր» է անվանում միջազգային պայմանները, իր ստորագրությունները. մի՞թե նրանց համար նույն «թղթի կեղտոտ կտորները» չէ եղած Բեռլինի դաշնագիրը և մանավանդ հայոց եղերաբախտ 61 հոդվածը, որ մեր ջնջման պատճառը եղավ:

• Պետությունները կարող էին հայկական բնաջնջման դեմ առնել, եթե ուզենային, նրանք կարող էին *reprnsaille (վախ դնել)*, սպառնալով և կիրառելով, թե եթե իրենք մտնեն թուրքի հողը, կը ջարդեն թուրքերին: Այդ չարին, որովհետև իրենց համար ինչ արժեք ունի հայը, իսկ եթե հայերի տեղ լինեին սլավոններ կամ ուրիշներ, օ, Աստվա՜ծ իմ, ինչ աղմուկ կը հանեին... բոլոր չեզոքներին կը

Բ 2004

գրգռին (Բելճիգայի տեղափոխության հարցը): Հայության ցնցոտի բեկորներն էլ նա հիմա ջնջում է քրդերի միջոցով, և այնուհետև, ի՞նչ հայկական հարց, հայ մնաց, որ հարց ծագի: Կը լվան բոլորը իրենց արյունոտ ձեռքերը և թուրքի ու գերմանի հետ նորից սեղան կը նստեն. «բարի դրացիություն»:

Համաձայնության պետությունները պատերազմի սկզբին հայտարարեցին փոքր ազգերի իրավունքը, և որպես թե այդ իրավունքները պաշտպանելու համար է, որ կռիվ են մտնում, սակայն եթե պատերազմից հետո, նրանք նորից երեսի վրա ձգին հայերը իրենց անսահման արյունի մեջ, այն ժամանակ, այդ պետություններին պիտի համարել և հայտարարել՝ ի լուր աշխարհի և բոլոր ժամանակների, թե նրանք թուրքից և քրդից ավելի ոճրագործ են, եղեռնագործ, և որ նրանց գործերի, խոստումների, դաշների վրա միայն կեղծիքի, խաբեության կնիք կա դրած:

Մինչև հիմա նրանք արդարանում էին, թե հայերին չէին կարող ազատել, որովհետև Գերմանիան արգելում էր և սպառնում էր պատերազմով. հիմա - ի՞նչ պիտի ասեն. և եթե հիմա էլ նույնը ասեն, ինչ որ արին ամբողջ 40 տարի, ուրեմն կը նշանակե, որ նրանք շնական պոլիտիկա ունեն, լրբեր են և դավաճաններ սևերես, և իրենց շահերի համար մորթել տվին միլիոնավոր կիներ և երեխաներ:

Այն ժամանակ, հայերը պիտի նստին և դարեր անիծեն ու նզովեն «բարեկամ» պետությունները, և պիտի խաչ հանեն այն մարդկանց, որոնք (հայ մարդկանց) արգելք եղան միացնելու իր զենքերը թուրքերի հետ՝ միասին կռվելու. գոնե այս դեպքում չենք ունենա սոսկալի ջարդեր, բարեկամ լինելով թուրքի ու քրդի հետ, ամուր նստած կլինեինք մեր տան մեջ, թող թե ռուսը տիրեր Հայաստանը: Երկու դեպքումն էլ՝ իհարկե, մենք անկախ Հայաստան չէինք ունենա, - որովհետև թուրքերը նույնպես կխաբեին, ինչպես միշտ խաբել են, բայց նրանք պատերազմից հետո ավելի մարդասեր ու երախտագետ կը լինեին դեպի հայերը, քան որ եղան ռուսները հայերի անօրինակ զոհաբերության, այս իսկ օրերում դեպի իրենց համար խաչված հայերը: Փաստ է, որ հայերը եթե այնպես վարվեին թուրքերի հետ, ինչպես վարվել են ամբողջ 18-19 դարերում ռուսների հետ – թուրքերը մեզ հիմա գլխի վրա կը պահեին: Հովսեփ, Ներսես և այլն կաթողիկոսները չեն տվել հայը թուրքին և ո՛չ էլ այն կամավորների խմբերը, որ հայը տվել է դարի ընթացքում ռուսներին հանդեպ թուրքերի...

• Սակայն երբ պետությունները խղճի գան և ամոթ ունենան, ու ստեղծեն Հայաստան, դրանով նրանք քաված կը լինեին իրենց պատմական մեղքերը, և հայերն էլ իրենց երազների, տենչերի սահմանին հասած կլինին:

Աշխարհի մեջ կատարված կլինի մի արդար գործ, այնուհետև նորից կարելի կը լինի հավատալ մարդկայնության, սերին, խոսքին, խղճին, իդեալին, քաղաքակրթությանը... եթե ո՛չ – քաք մարդու վրա:

• Շոտլանդիայում, պուրիտանական եկեղեցիներում ամեն առավոտյան առաջին աղոթքը հայերի համար է լինում:

• Մենք առանք Քրիստոսի խաչը մեր ուսի վրա, և մինչև այսօր տանում ենք այդ խաչը, իսկ մյուս ազգերը վաղուց է որ այդ խաչը ոտքի տակ են տվել: Թուրքերը եռանդով ջնջում են հայերին իրենց վրեժը քրիստոնեությունից հանելով,

նա մեզ կոտորում է՝ իբրև քրիստոնյաների, նա դրա մեջ գտնում է իր գերագույն հաճույքը և դրախտ գնալու դյուրին ճամփան:

1895-96 թթ. քրիստոնյա Եվրոպան, որ պատերազմի մեջ չէր և ձեռները ազատ, թույլ տվեց և ականատես եղավ սարսափներին, իսկ հիմա էլ՝ Գերմանիան, Լութերի Գերմանիան...

• Կարծես ճշմարիտ է այս դիտողությունը, թե Շվեյցարացիք կեղծավոր, երկերեսանի են. հայերին տեսնելով՝ ցավակցություն են հայտնում, թուրքերին տեսնելով՝ երևի համաձայնվում են հետները: Մի խոսքով չի կարելի հավատալ սրանց... իրենց խոհանոցային հաշիվներից են առաջնորդվում:

• Ասում են, որ թուրքերը մտադիր էին ջարդն ու տեղափոխությունը ամենից առաջ հույներից սկսել, բայց գերմանացիները արգիլեցին այդ, վախենալով Հունաստանից, որ բնական է, պիտի իսկույն անցներ Համաձայնության կողմը: Նա՝ Գերմանիան համաձայն և ո՞վ գիտե խորհրդատու եղավ հայաջնջմանը: Կայզերը կամ տղան, և Բեթմանը պիտի սպանվին հայի ձեռքից, չմոռանանք այդ:

• Պատմությունը մենք չպիտի մոռանանք: Չպիտի մոռանանք թե ռուսները ինչպես են մեզ հետ վարվել ամբողջ 19 դարում. Հայ-տաճկական հարցի մեջ, 1895-96 թթ. ջարդերում Գալիցին, կալվածների գրավում, Հայ-թաթարական կռիվներ, և վերջապես այս մեծ պատերազմում: Կարող է մի ժամանակ գա, որ ռուսները մարդ դառնան մեր հանդեպ, բայց հրեղեն տառերով պիտի գրել, որ սերունդները իմանան, թե նրանք մեզ արյուն լացացրին, հոգիներս հանեցին, և հանում են:

Հավիտյան չպետք է մոռանալ:

• Բոլոր հայերի թիվը, - 2.021.400 Օրմանեանի հաշվի համաձայն 1911 թվականին:

Երկրագնդում ամբողջ հայերի թիվը հասնում է ըստ Օրմանեանի 3.667.000:

• Ժընևում թուրքերը փետրվարի մեջ (1917 թ. - Ա. Ի.) մի ժողով երեկույթ են ունեցել, ուր արդարացրին Թալեաթ-Էնվերյան հայաջինջ ռեժիմը: Նաև ուրախություն են հայտնել, և ծաղրել են հայերի լեզուն, երգերը և ազատության ձգտումները, ասելով, որ այդպիսի մի աղքատ, ողորմելի ազգ դեռ ձգտում է անկախության:

• Ֆրանսիացիները անուղղելի թրքասերներ են, որովհետև նրանք էլ սրանց պես կեղծավոր են, ֆրանսիացիք էգոիստ, և շա՜տ նյութապաշտ և գոռոզ ազգ լինելով՝ իրենց տոկոսների համար միշտ ույժ են տվել ու պաշտպանել թուրքերին՝ արհամարհելով այդ լուծի տակ քամվող ազատատենչ ազգերին: Միայն իրենց պատերի վրա է գրված «եղբայրություն, ազատություն...», իսկ իրենց սրտերի մեջ փո՛ղ, շա՛հ. դաժան, կեղծ: Նրանք էին, որ ույժ էին տալիս ռուս հին ռեժիմին:

Ռամկավար Շվեյցարիան էլ նույնն է: Էլ չեմ խոսում Գերմանիայի մասին, որ մի զարհուրելի բան է:

Հրեաները և վրացիները

Հրեաները թրքասեր են, և հայատյաց, հրեա մամուլը միշտ չքմեղել է Սուլթանին, ջարդերը մերժելով կամ արդարացնելով, կաշառված Սուլթանի ոսկիներով. Վայմբերգ, Բրայտներ և բազմաթիվ թղթակիցներ հրեաներ են:

P 2004

Վրացիք հայտնի են, մանավանդ ազնվականությունը, բայց դեմոկրատները նույնպես նույնն են: Ժընևում, անարխիստ Գոգելի ասել է, թե թուրքերը արդար են, հայերը՝ մեղավոր: Չմոռանալու բաներ են, թեկուզ ռուս հեղափոխությունը գա մեզ ներողամիտ դարձնելու:

Ռուս հեղափոխությունը

• Հավատանք՝ ի մի Աստվածության և՝ ի մի սուրբ Երրորդության. (Հայաստան՝ միացած, և նրա երեք բաժինները՝ Ռուսահայք, Թուրքահայք, Պարսկահայք իբրև երրորդություն):

• Ռուսական այս հրաշափառ հեղափոխության սկզբից, մարտի 16-ից (1917թ. - Ա. Ի.), մինչև այսօր ապրիլի 16-ը ես ներքնապես համոզված եմ, որ ամեն բան աջող պիտի գնա, կոնտր հեղափոխություն, ռեակցիա չի գալու:

Հակասական, վրդովեցուցիչ լուրերը վախեցնող չեն, հասկանալի է ներկա հուզված մոմենտում, օվկիանոսը հուզիչ է, մի օրվա մեջ չի խաղաղվի: Հայաստանն ազատվեց, այսպես կամ այնպես, այլևս կասկած չկա. վե՛րջ հայ մարտիրոսության:

• Վրացիք Եվրոպայում հայերի մասին շարունակ աննպաստ կարծիքներ են տարածում, թե նրանք կեղեքիչներ են, վաշխառուներ, հրեաներ: Թուրքերի, հրեաների հետ ձեռք-ձեռքի տված գերմանական մամուլում անվերջ խայտառակում են հայերին, Բեռլինում հրատարակվող «Կարթալի գազետում» (Միշել Ցերեթելի – Քարթալի գազետ) նույն լեզուն:

Իսկ ռուս շրջանում, էմիգրանտների մեջ տարածում են, թե հայերը երբեք չեն կռվել ռուս հեղափոխության համար. նրանց ձգտումները ազգային են եղել, եկեղեցական: Տիրող կուսակցությունը ազգային-բուրժուական է, և ձգտում է բարեկամանալ միշտ իշխող պետության հետ:

Սրանք անշուշտ մոռացել են Ալիխանովի սպանությունը, իսկ թաթարներին համարում են ազատության համար կռվողներ: Այդ լրբերը թրքասեր են և գերմանասեր. չքմեղում են կամ արդարացնում թրքերի և գերմանների ոճիրները, ջարդերը Հայաստանում և Բելգիայում. հիվանդանոց-նավերի, Կարմիր խաչի կործանումը և այլն: Նրանք մեր կատաղի թշնամիներն են, «դեմոկրատները» ավելի ևս:

• Թուրքերը և քրդերը և չերքեզները, որ թե Թրքահայաստանում և թե ռուսական հայերի գլխին աշխարհի ամեն սարսափները բերել են՝ այսօր պիտի ներվին ռուս նոր պետությունից, պարզ ու պլիկ պիտի կանգնին՝ անմեղ ու հավատարիմ վայելելով մեզ հետ ամեն և գուցե ավելի շնորհքները և բարիքները նոր կարգերի:

Բայց մենք չպիտի մոռանանք, միշտ պիտի հիշեցնենք մեր սերունդներին, և ատելություն ու ոխ սերմանենք:

• Զզվելի են «չեզոք պետությունները» դեպի հայերը բռնած դիրքի հանդեպ, Միացյալ Նահանգները, Բրազիլիա, Սպանիա, Հունաստան, Ռումանիա (առաջ, ինչպես և Բուլղարիան), Շվեդ-Նորվեգիա, Հոլանդ, Դանիա, Զվիցերիա, - կարող էին, եթե ուզենային առաջն առնել այդ տնաքանդության, թե ճնշում գործ դնելով

Գերմանիայի և թե թերթերի վրա:

Բայց այդ շները միայն իրենց շահերը ճանաչում են, և ոչ մարդկայնական զգացում, ապագա պատմությունը դրանց պիտի գազան ու բարբարոս անունով կնքե: Մենք մեր պատմության և մամուլի մեջ դեպի դրանց՝ դեպի Եվրոպան նույն դիրքը պիտի բռնենք՝ բարբարոս, մարդակեր, եսամոլ, գծուծ քաղաքակրթության՝ ահա Եվրոպան՝ խոզ ու բոզ: Ամերիկայի թուրքերի հետ կռվի մեջ մտնելով՝ Միջագետքի հայերը մնացին բախտի ռաստին: Հիմա կարելի է ասել, որ գրեթե ոչինչ չի մնալու հայության այդ մնացորդից: Իսկ պատերազմը կարող է դեռևս մի տարի, երկու, երեք տարի տևել:

Դժվար է Գերմանիային ծնկի բերել:

27 ապրիլ 1917

Եվրոպան միանգամայն բարոյազուրկ է. հոգեպես փտած է և կամաց-կամաց ընկնում է տգիտության և անզգայության մեջ. շահը, պզտիկ նյութական շահը տիրապետում է բոլոր հոգիների և մտքերի վրա, շահով է չափվում ամեն արժեք, ով նրանց սանտիմ է տալիս, նա ազնիվ է և սիրելի, ուղղակի պոռնիկի հոգեբանություն է: Եվ այդ է պատճառը, որ ահավոր, պատմության մեջ չտեսնված հայկական ջարդերը ոչ միայն զայրույթ չհարուցին նրանց մեջ դեպի թուրքերը, այլ ջանացին օգտագործել այդ արյունը՝ դառնալ փաստաբան ու պաշտպան թուրքերի համար, ստանալով նրանից վարձ ու հատույց, կոնցեսիաներ: Նույնիսկ մեղադրեցին հայերին, աշխարհի առաջ մեզ վարքաբեկեցին ու անվանարկեցին, ցույց տալով, որ թուրքը մեզ պատժում է, իբրև հանցավորների, ոճրագործների, իբրև շահագործողների, փերեզակների:

Եվրոպացին մտածում է, հարկավ թուրքը 'ի բնե գազան չէ, ընդհակառակը նա շա՜տ ջենտլմեն մարդ է (օր. Լոտի, անգլիացիք, Լորդ Սեսիլ, Լամարտին և այլն, և այլն), միայն հայերն են մեղավոր, ընչաքաղց են, կեղեքիչ, խորամանկ, խաբող, և ազնիվ, արիստոկրատ թուրքը արդար զայրույթով պատժում է հային: Հարկավ, մեղավորին են պատժում, իսկ մեր բարեկամները – օրինակ Լ. Ֆավր, և մենք իսկ վախենում ենք բացարձակ ասել, թե թուրքը մեզ կոտորում է, որովհետև մենք ծգտում ենք անկախության, ընդհակառակը, մենք այդ ծածկում ենք, և ասում ենք՝ թե նա՝ թուրքը բարբարոս է, քրիստոնյա ատող և արյունի սիրահար:

Այնինչ Եվրոպան տեսնում է, որ Թուրքիան իր հետ սոսկալի քաղաքավարի է, կրոնահանդուրժող, և եվրոպացիներին, իբրև քրիստոնյաների, նույնիսկ հարգող:

Սոցիալիստները, նույն եվրոպացիներն են, նրանց հոգեզավակները, նույն շահով թաթախված, նրանք ևս ատում են հայերին՝ իբրև կեղեքիչների, և սիրում թուրքերին, իբրև զոհերի, կեղեքվողների: Անշուշտ դրությունը չի փոխվի, եթե մենք մեզ ազատագրության համար կռվողներ ցույց տանք, քանի որ Եվրոպան, ինչպես Հայր Ալիշան ինձ 1901 թ. ասաց, «ավիրված է Եվրոպայի բարոյականը», խաչակիրների Եվրոպան չէ, այլ բուրժուա-սոցիալիստ, և թուրքի սանտիմը սիրող: Մենք

Բ 2004

կարծում ենք, թե հայկական ջարդերը պիտի խոցե ազնիվ Եվրոպայի խիղճը, նա պիտի զայրանա, հուզվե, և միահամուռ միանա ու կռիվ հայտարարե թուրքերի դեմ, որքա՞ն միամիտ էինք, չգիտեինք, որ Եվրոպային պետք են այդ ջարդերը իր շուկան տարածելու և իր դիրքը ամրացնելու Թուրքիայում 'ի հաշիվ հայերի արյան և 'ի մրցում մյուս պետությունների: Մեր ջարդերի պատճառով Եվրոպական պետությունները թուրքի ձեռքը սեղմելու մեծ փառքը իրար ձեռքից են խլում:

Իսկ այս ջարդերը: Չեզոքների մեջ ո՛չ մի բողոք, ո՛չ մի զայրույթ, ո՛չ մի խաչակրություն, նույնիսկ Զվիցերիան. այս ազատ կոչված երկիրը, ավելի բարեկամացավ թուրքերի հետ՝ նրանցից նոր դեսպանություն ընդունելով և իր դեսպանը, իր շահերը պաշտպանելու համար թերթերում, ունենալու, որ մինչև այսօր չունեին թե սա և թե նա, առաջարկվեց:

• Ժողովրդից շա՜տ անգամ լսվում են ձայներ, հայերին արժեր, որ ջարդեին, հայերը մեղավոր են, թուրքերը ազնիվ են և բնավ գազան չեն, այլ համբերանքից դուրս եկած մարդիկ:

Սոցիալիստների մասին ի՜նչ խոսք, վրացի, հրեա, ռուս, գերման, իտալացի, ֆրանսիացի և այլն, նույն քաքը:

Մ. Բակունինն ասել է. «Մարքսի սոցիալիզմը և Բիսմարկի դիպլոմատին միասին աշխատում են Եվրոպացի պանգերմանիզիասիոնի համար»:

Ույժ է պետք ունենալ, ֆիզիկական ույժ, փշրելու համար դրանց գանկերը, ահավոր տեռոր, թույն, ժանտախտ, որով կարողանանք ստանալ մեր անկախությունը: Խիղճ, զգացմունք զարթցնել 'ի զուր է այդ լրբերի ու սրիկաների մեջ, դրանք շատ քաքեր են, դրա համար էլ ես սոսկալի ատում եմ Եվրոպան, իր քաղաքակրթությունը, և միայն երազ ունիմ – տեսնել Եվրոպան անապատ ու գերեզման դարձած...

10 մայիս 1917

• Մեր մեջ անբաժանելի ռոմանտիզմ կա դեպի Ֆրանսիան և Անգլիան, իբրև ազատությունների, մարդասիրությունների երկիր, այնինչ Ֆրանսիայում միայն փողոցի պատերի վրա են գրված «ազատություն, եղբայրություն, հավասարություն» խոսքերը, և ինչ որ անում են, ինչը արվում է, անում են և արվելու է այդ գաղափարների դեմ, մանավանդ արտաքին քաղաքականության մեջ: Այժմ էլ Ֆրանսիան ուզում է Կիլիկիան տիրել, ոմանք էլ ասում են թե Իտալիան է ուզում, վայ թե Կիլիկիան անցավ Ֆրանսիայի ձեռքը, ինձ թվում է թուրք տիրապետությունից լավ չպիտի լինի. մենք գիտենք Մարոքի վիճակը. ճնշում, կախաղան, կեղեքում և այլն: Կիլիկիան պետք է լցնեն Légion Arangere *(վայրենի խմբերով)*, որոնք նոր ենիչարիներ են, այլևս մնաս բարև ազգային ոգի և անկախություն. պիտի հիմիկվանից կռվել ու բողոքել դրա դեմ:

Այն, ինչ որ թուրքերը մեր գլխին բերին, եթե դրա մի չնչին մասը բերեին եվրոպական մի որևէ ազգի գլխին, օրինակ՝ Բելգիա, Հոլանդ, Դանիա և այլն, այդ

ժողովուրդները հավիտյան քեն ու անհաշտ կռիվ պիտի մղեին թուրքերի և եվրոպական իմպերիալիստ քաղաքականության, և նրա կրողների դեմ, կը թունավորեին բոլորի կյանքը, տեռորներով կը ծածկեին ամեն ճանապարհ ու հրապարակ, թատրոն ու կուրորտ: Ազգը միահամուռ զգացումով կը բռընկվեր, կը խենթանար ազգը իր վրեժով ու ոխով, իսկ մենք... մենք ամաչում ենք ասել մեր վրեժի մասին, մեր պահանջների մասին, որպեսզի վրացի և այլ երեխաների և դեմագոգների առաջ շովեն դուրս չգանք:

Վրացիները բացարձակ խոսում են չորս միլիոն վրացու անկախության ձգտման ու պահանջի մասին և մնում են սոցիալիստ, իսկ մենք ծախում ենք մեր արյունը, մեր սարսափները՝ սոցիալիստ հռչակվելու մասին:

Մենք պիտի վստահ լինենք, մենք ենք իսկական սոցիալիստները, որ իսկական արյունոտ և ծանր զոհերով կռիվ ենք մղել թե՛ Ռուսիա, թե՛ Թուրքիա և թե՛ պարսկական անթիվ խուլիգանների, բռնության դեմ, ժողովուրդների անկախության համար:

• Հիմա, որ Չխեիձեն և Ռամիշվիլին այնպես տխրահռչակ դեր են կատարում ռուս հեղափոխության մեջ*, եթե դրանք հայեր լինեին, ո՞վ գիտե, որ ռուսները «պզտիկ մ՝ չէին ջարդել հայերին», կամ վրեժ կհանեին երբևէ, բայց վրացիները բախտ ունեին. և թուրքի հետ են բարեկամ և ռուսների հետ և գերմանների հետ: Չենք հասնում նրանց խելքին:

• Թուրքերի մտայնությունը գայլային մտայնություն է, ամեն մի հասարակական-սոցիալական շարժում (հեղափոխություն, եվրոպականացում, սոցիալիզմ, լիբերալիզմ, դեմոկրատիզմ) նրանց մեջ վերածվում է գայլության:

• Պատերազմից հետո պիտի սկսվի մեր պատերազմը թուրքերի դեմ. ինչել պիտի նրանց, մեր երկրից ջնջել: Ո՛չ մի գաղափար մեզ չպիտի վախեցնե այս խնդրում, մենք պիտի հատուցում տանք, revanche *(արիական)*, տղամարդ ազգերը միայն ընդունակ են revanche, իսկ վախկոտ, ցած, այլասերված ազգերը մոռացման, ներողամտության: Ինչպես կվարվեին անգլիացի դեմոկրատները, եթե մի ազգ այն խաղը բանար նրանց գլուխը, ինչպես թուրքը խաղաց մերին: Չեմ կասկածում, որ կը ջնջեին վերջին թուրքը ինչպես ջնջեցին Բրիտանիայից նրանք վերջին գայլը:

Եվրոպան այն ժամանակ մեզ պիտի սիրե, երբ մենք թուրքերը կոտորենք, երբևէ, երբ որ այդ լինի: Սոցիալ-դեմոկրատները վրեժ են հանում կեղեքողներից, մի՞թե մենք իրավունք չունենք մեր դահիճներից վրեժ առնելու: Եթե մեկը սպանե մի սոցիալ-դեմոկրատի որդին կամ եղբայրը, ի՞նչ կանե այդ մարդը, նրան կներե թե՞ ձեռքից եկած պատիժը կը տա:

Թուրքերը այնպիսի հսկայական աղետ են հասցրել մեզ, որ ամենաբարի Աստվածը, կամ ամենաչար Աստվածը, եթե մենք ջնջենք թրքերին, մեզ սրտանց կը ներե և կօրհնե:

**Նկատի ունի 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունը - Ա. Ի.*

Եվ աշխարհիս երեսը դեռ չի երևակայած այն պատիժը, որին արժանի լինեին թուրքերը:

Դժոխքը դրախտ է այդ ոճրագործների համար, եթե բոլորին իսկ դժոխք ուղարկենք: Թուրքերին մենք պիտի արճիճի հեղեղի տակ ծածկենք, մենք պիտի պոռնկորդի լինենք, որ ձեռք մեկնենք նրանց, դարավոր վրեժ ունենք, ոչ միայն վրեժ, այլ ուղղակի ազգային իդեալ – ունենալ մեր Հայաստանը հայերի համար:

• Հայկական նահանգները Ռուսիայում որոշել և սահմանել, ստեղծելով հայկական բնաշխարհ, ուր լեզուն կը լինի ամենուրեք հայերեն: Փոստ, երկաթուղի, հեռագիր, դատ և դպրոց: Գիմնազի ռեալ, առևտրական՝ ճանաչել ազգային, և ազգայնացնել, ու պիտի պահվին պետության հաշվով, ինչպես որ պահվում են ռուս դպրոցները: Լազարյան ճեմարանը հայացնել: Պաշտոնյաները՝ դատարան, փոստ, երկաթուղի հայ նահանգում – հայեր պիտի լինեն:

Հայ քաղաքների անունը – հայ գյուղերի անունները (թրքերենը) հայ դարձնել, գետեր, լեռներ, գավառներ վերականգնել պատմական անունները, փողոցները հայ անուններով, ամեն ռուս և թուրք անուն ջնջել:

Վարանցովի արձանը քանդել, ծուլել կովկասյան սեյմի զանգի համար:

• Թուրքերը շան որդի են և գիտեն հազար և մի խորամանկ լեզու բանեցնել, և դրանով էլ միշտ խաբում են եվրոպացոնց: Ամենուրեք թե Ձվիցերիայում և ուրիշ տեղեր կան թրքասեր պրոֆեսորներ, որոնք միշտ պաշտպան են հասնում թուրքերին և ամեն մի կոտորած արդարացնում կամ ուրանում: Թուրքերին գիտնալով ու ճանաչելով շահասեր և բոզ և կաշառվող Եվրոպան ու նրա դիպլոմատիան՝ միշտ ջարդել են հայերին և անվախ շարունակել իրենց քայլը Եվրոպայում:

Հրեական և այլ մամուլը միշտ նրանց նեցուկ է և վարկաբեկող հայերին:

Եվ հիմա էլ Սաբահ-էդդինը դուրս է եկել ու Լվովին հանդգնել է նամակ գրել, ուր ի միջի այլոց դնում է, որ ռուս նոր կառավարության և Վիլսոնի հայտարարությամբ ազգերը պիտի ազատ լինեն, մեծամասնության պիտի տրվի հողը, և դրա հիման վրա՝ Թուրքիան պիտի մնա անձեռնմխելի, որ հայերը լավ կարող են ապրել նորոգված Թուրքիայում, քանի որ ջարդը արել է Ժեռն-թուրքը (երիտթուրքը - Ա.Ի.), իսկ թուրք ժողովուրդը անմեղ է, և հետևապես թուրք ժողովուրդը չպիտի հայերի համար վրեժի ենթարկվի:

Ահա ուր է հասնում «լավ» թուրքի լրբությունը, ազգերը պիտի ազատ լինեն, իսկ հայ ազգը նորից պիտի թուրք ձեռքի տակ մնա, նրա վրա չպիտի տարածվի «ազգային անկախության» սկզբունքը:

Թուրք ժողովուրդը անմեղ է, ապա ովքե՞ր են հազարավոր տները կողոպտել, երեխաներին կոտորել ու թուրքացրել, կանանց պղծել ու հարեմ տարել, ովքե՞ր են, որ մինչև օրս պահում են հայ որբերին ու կանանց և հանդգնում են չհանձնել հայերին:

Մենք ճանաչեցինք և «լավ» ասված թուրքերին, այդ շները բոլորը ուրախ են հայերին ջարդելու մեջ, և իհարկե գիտեն եվրոպացու լեզվով խոսել, «խաղալ

թուրք ազգ», կառավարությունն է մեղավոր, ուրիշ ո՛չ ոք:

Այդպես էին ասում և Ժեռն-թուրքերը: Մի օր էլ Սաբահ-էդդինները կկոտորեն, և մյուս թուրքերը կասեն. կառավարությունն է մեղավոր, ջարդողները միլիոններ կը դիզեն, հանգիստ կերթան լիրք Եվրոպայում կը տեղավորվեն, և նրանց տեղը կը գան ուրիշ ջարդարարներ: Մենք պիտի ամեն փորձ թուրքերի հետ հաշտվելու մեկդի նետենք, թուրքերը պիտի ոչնչանան, ահա մեր լոզունգը:

Հայ պետություն պիտի ստեղծվի, և թուրքերը ավելի լավ կապրին հայերի ձեռքի տակ: Միանգամայն ընդմիշտ գիտենանք, որ հրեա-վրացի սոցիալ-դեմոկրատիզմը հայերի ոխերիմ թշնամի է և թուրքերի բարեկամը: Բացարձակ պիտի աղաղակենք և ռումբերով պիտի պահանջենք մեր իրավունքները:

Այս պիտի բացարձակ քարոզել, և խոստովանվել: Մեր թեորետիկոսները պիտի գան այս երկվությունը գիտնականապես հիմնավորելու:

• Ռեալ-պոլիտիկ, ահա եվրոպացիների Աստվածը: Ո՛չ վրեժ, ո՛չ սեր, ո՛չ պատիվ, ո՛չ դաշն, ո՛չ թշնամություն, այլ միայն շահ դրական-տնտեսական շահ: Մի ժամ առաջ բարեկամ, մի ժամ հետո թշնամի, մի ժամ հետո նորից բարեկամ, ինչ որ թելադրում է շահը, միայն շահը, նորից ու միշտ շահը:

• Հայ ազգը այս աշխարհի վրա տեսավ ու ապրեց դժոխքը իր բոլոր, բոլոր սարսափներով ու տանջանքներով: Եվ եթե նրան անկախություն չտան, նա իրավունք ունի, արդար իրավունք՝ ռումբերով սպանելու և՛ Պուանկարե, և՛ Վիլհելմ, և՛ Բրիանի, և՛ Վիվիանի, և՛ Հոլվեգ, և՛ Սազոնով, և՛ նոր Ռուսաստանի շեֆերին, և՛ Գրեյ, և՛ Ասկվիտ, և՛ Լլոյդ Ջորջ, և այլն, և այլն...

11 հունիսի 1917

Ես հիմնվում եմ Եվրոպական թերթերի տված լուրերի վրա, թե ի՞նչ է կատարվում Ռուսիայում – չգիտենք:

Որքան ես ճանաչում եմ ռուս սոցիալիստներին, այդ ցնդաբան, համառ, խենթ, խելագար, մոլեռանդ լակոտներին՝ պրոգնոզը վատ է: Նրանք չեն ճանաչում պետական շահեր, ամոթ չունեն և խելք չունեն, ինչ որ Մարքսը ասել է սրբություն է: Նրանք պիտի երկիրը տանեն դեպի անարխիա, ազգամիջյան կռիվ, սոցիալական կռիվ: Պիտի դավաճանեն ոչ միայն դաշնակից մեծ պետություններին, այլև Բելգիային, Սերբիային, Ռումանիային և հայերին: Գերմանիան այնպես հաջող չի կարողանում պաշտպանել իր դատը, որքան ռուս սոցիալիստները պաշտպանում են Գերմանիայի դատը: Ռուս ներկա կառավարությունը ուղղակի թշնամի է դարձել դաշնակիցներին և բարեկամ Գերմանիային:

Ռուսիայում լոզունգն է «Կեցցե Գերմանիա, կորչեն Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա»:

Անպատճառ այդ ժխորի մեջ կան թե կաշառած գերմանոֆիլներ, թե համոզված, թե հին ռեժիմի ագենտներ, պրովակատորներ: Տոն տվողը հրեաներն են, վրացիները և նրանց խելքի նման ռուսները: Երևի, Ռուսիան սոցիալիզմից ավելի մեծ վտանգ պիտի կրե, քան ցարիզմից պիտի կրեր:

P 2004

Փրկությունը նրա մեջն է, որ Ռուսիայից ծագեն փրկարար ալիքներ՝ գյուղացիություն, կազակ, բուրժուաներ դրության տերը դառնան և փրկեն երկիրը: Թե չէ Սիբիրից և Եվրոպայից եկած Կենտ. կոմիտեի անդամ սոցիալիստները չունենալով պետական խելք կը կործանեն երկիրը: Ճապոնը կը տիրե Սիբիրին և կը բաժնեն Անգլիայի և Ֆրանսիայի միջև, պարտքի փոխարեն: Եվ ուրիշ շա՜տ երկիրներ կը կորցնեն Անդրկասպիան, Կովկասյան երկիրները, Պարսկաստան, Տանուբի նոր հողերը, Ղրիմ... և այլն: Պիտի երանի տան Ցարին:

• Սուլթան Համիդի պանիսլամիզմին մի՛ացավ Բագվի թուրքերի պան-թուրքիզմը. Ժէոն-թուրքերը բագվեցիների աշակերտներն են: Սղաև, Ջան-Փոլատ, Օգչուրա, դրանք սարքեցին, ինչպես Բագվի, այնպես և Թուրքիո կոտորածները:

Վրացիները նպաստում են հայաջինջ շարժմանը: Նակաշիծեն փայլուն արտահայտիչը եղավ և սանձը արձակողը պանթուրքիզմի:

• Եթե հայերը միշտ թեքվել են դեպի Ցարիզմը, որովհետև հասկանալի կերպով բարվոք են համարել ցարական կնուտը, քան Սուլթանի յաթաղանը: Իսկ ինչ խոսք, անսահման տարբերություն ռուս և թուրք ժողովրդի, առաջինը մարդ է, երկրորդը՝ բորենի:

• Թուրքերը ոչ թե ապստամբություն են ճնշում, այլ ազգեր են ոչնչացնում, մեր վրեժը հագուրդ և սահման չպիտի ունենա, թուրքերը մեր գլխին այն մեծ եղեռնն են բերել, որ եթե վերջին թուրքն իսկ սպանենք՝ դարձյալ բավարարված չենք զգա մեզ:

Մեր կորուստի հավասարակշիռը գտնելու համար մենք պիտի շա՜տ թուրք ջարդենք...

Կազմակերպված տեռորներ անենք ամենուր՝ ջնջելու նրանց ինտելիգենցիան: Անվերջ սպանենք դեսպաններ, մինիստրներ, վալիներ, նույնպես գերմաններից:

Խաղաղության ժողովում պիտի պայթե առաջին ռումբը: Աստված տա մինչև այդ օրը Պոլիսը, Միջագետքը, Սիրիան գրավի, սակայն թուրքերը հետ նահանջելով այդ շրջանի հայերին պիտի և ջարդեն, և հետները տանեն...

Առայժմ 1.600.000 թուրքահայից միայն ապահովված կան ամենաշատը 400.000 մարդ (300.000 Կովկաս, Եգիպտոս, և 100.000 Ամերիկա և այլն), իսկ մնացած 1.200.000 եթե 3-400.000 մարդ ձեռք ընկնի, դարձյալ գոհ պիտի լինենք: Ուրեմն թուրքերը հայության կեսը ջնջեցին: Նրանք սովորություն ունին այնպիսի աներևակայելի սարսափներ գործելու, գիտնալով, որ Եվրոպան չի կարող հավատա:

Եթե նրանք միայն մի 50.000 հայ սպանեին, Եվրոպան կհավատար և կմեղադրեր: Բայց միլիոն սպանելով կստեղծվի այն հոգեբանությունը՝ որ նման է ստության, զրպարտության և գրեթե նույնիսկ կարդարանա ասելով, թե մարդ չի սպանվել: Մեծաքանակը ամենափոքր թիվն էլ անճիշտ է դարձնում: Երբ ասում են, թե թուրքը այսքան հայեր է սպանել, ասում են, անկարելի է, ուրեմն սուտ է: Եվ լիրբ Եվրոպան, որ խրախուսել է և երես տվել թուրքերին, միշտ տրամադիր է հավա-

տալու նրանց: Հայերից կողոպտված փողերով գնում են գրիչներ ու ժուռնալիստներ (նույնիսկ Ֆրանսիա, Անգլիա, այստեղ) և ամբաստանում հայերին...

Թուրքերը մի բան են ուզում միայն, անվերջ ջարդել հայերին, և պահանջել հայերից, որ լռեն, կամ հերքեն և գոհունակություն հայտնեն:

• Հայ ժողովուրդը իր հասարակական հիմնարկությունները, կուլտուրան պահում է ազգի հաշվով, փոխարինելով պետության գաղափարին, օրինակ, մյուս երկրներում դպրոց, որբանոց և այլն պահվում է պետության հաշվով, իսկ մեզ մոտ՝ ազգի, դրա համար էլ հայ մնալը ավելի դժվար է հայի համար, քան թե ռուսի կամ դանիացու համար այդպիսին մնալը, մենք երկու պարտք ունենք կատարելու – պետական և ազգային, երկու տիրոջ պիտի ծառայենք, երկու հարկ տանք: Հայ ազգը կրկնակի պիտի աշխատե և գործե:

• Հայության ծանր խաչը ամեն մի հայ պիտի կրե՝ հարուստ թե աղքատ:

• Այս պատերազմը ուրիշ անուն ունի, սա համաշխարհային տերևաթափ է՝ սակայն գարնան և ամառվա մեջ, ոչ թե աշնանը կամ ձմռանը:

• Հայաստանի անկախությունը երազ. այդպես է՝ որովհետև նրան անկախացնելու միջոցներ չկան, կամ միջոցները անգործնական, երազային են: Ազատելու համար պետք էին – ժողովրդի թիվ, աշխարհագրական և քաղաքական տարբեր դիրք, Ռուսիայի համաձայնություն, Եվրոպայի միահամուռ կամ գերակշիռ կամք, ուժ՝ հաղթելու ամեն իրավակարգի, թրքի... և ո՛վ որ լինի, սակայն քանի որ այդ ամենը, կամ մի մասը պակասում էր, ուստի և նա մնաց ու կը մնա երազ, մինչև այդ խոչընդոտների վերացումը:

• Միջազգային իրավունքը ույժն է:

• Ո՞ւր ընկան, ինչպե՞ս ընկան, ե՞րբ ընկան մեր ընկերները՝ Սիամանթո, Իսահակ... ոչ ոք բացի թուրքերից ներկա չի եղել նրանց տանջանքին և վերջին հառաչանքներին, միայն գազան թուրքերը... Ո՛չ մի մոտիկ մարդ, ո՛չ մի հարազատ, և ոչ ոք չկա, որ մեզ պատմե նրանց վախճանը... Միայն երկնքի արևը, աստղերը, ամպերը... որոնք և պատմելու են հավիտյան տմարդ թուրքի և շահասեր եվրոպացու ոճիրները հայերիս գլխին բերած: